

վից գաղթող Հայոց մասին Յովսէփ Բ Կայսրն 1783 ին գրած հրովարտակին մէջ կ'ըսէ. «Տեղւոյս (Չեռնովիցի) հայ հասարակութիւնն, որուն աստուածային պաշտամանց Ես անձամբ ներկայ գտնուեցայ, է՛ բաց ի սակաւուց, ուրիշ հայ կաթողիկէայց հաւասար: Անոր համար այսուհետեւ իրենց կրօնին քննութիւն չկատարուի, եւ զիրենք իրենց առուտուրին մէջ անհանգիստ պէտք չէ ընել, այլ աշխատելու է ուրիշ այսպիսի մարդիկ ալ հոս բերել¹⁷⁹:»

Այսպիսի կաթողիկէայ Հայեր, որք երբեմն արեւելեան էին, շատ կային ի Պուքովինա, եւ այստեղ կալուածներ ունէին, զորոնք յետոյ թողին եւ Կալիցիա մեկնեցան:

Այսպէս կը գտնենք՝ որ Քրիստափոր Աբրահամովիչ ստացաւ զՀլիպոքա, եւ Յովսէփ Աբրահամովիչ զՏորոչուց եւ զԹուուզրի¹⁸⁰:

Ներսէս, Ստեփան եւ Նիկողայոս Այվազ, որոնք Չեռնովից գաղթած էին, 1789 ին կայսերական հաւանութեամբ գնեցին Միդքըու կալուածն, յետոյ նաեւ Ռոսդոքի, Սէրէթ գետի քով Սգանէշդի, Սինըուց եւ Վիժնից կալուածներն:

Միքայէլ, Իգնատիոս, Յակոբ, Գրիգոր, Ղազար եւ Կայեղան, որդիք Անտոն Անտոնովիչի, որ «Сap de bou Jacobowicz» կը կոչուէր, ստացան Պէրհովիթ, Օշէխլիպ եւ Քուչուրմիք կալուածները:

Աստուածատուր եւ Յովհաննէս Պոկտանովիչ գնեցին Օրըշէնի: